
ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ
«ՄՇԱԿ» ԹԵՐԹԻ ԷՋԵՐՈՒՄ

ԱԼՈՑԱՆ Լ. Ա.

Դեռ 1892-ին, երբ նոր էր ձևավորվում երիտթուրքական շարժումը և նրա ղեկավար Ահմեդ Ռիզան նորաստեղծ հայկական քաղաքական կուսակցություններին կոչ էր անում ձեռք ձեռքի տալ Թուրքիայում ապրող բոլոր ազգությունների ներկայացուցիչների հետ և տապալել կարմիր սուլթանին, «Մշակի» տաղանդավոր խմբագիր Գր. Արծրունին հայտարարում է, թե հայատյաց սուլթանից ավելի վատն են լինելու երիտթուրքերը, և հայությանը խորհուրդ է տալիս չխաբվել նրանց սին խոսքերից, որովհետև «թուրքը միշտ էլ թուրք է մնում»:

Եվ չնայած երիտթուրքերի հետ ՀՅԴ-ի և Հնչակյան կուսակցության ներկայացուցիչների հանդիպումներին ու քննարկումներին, հայերի համար տեղափոխություն էր գալիս Ռուսաստանից, Պարսկաստանից և Թուրքիայից:

1905-1907 թթ. ռուսական հեղափոխական շարժումներն արձագանք գտան նաև շահական Պարսկաստանում և սուլթանական Թուրքիայում: Սահմանադրությունը, որ հռչակել էր ցարը, պաշտպանություն էր գտնում այս երկրների «առաջադեմ» մտավորականների շրջանում: «Մշակի» Իրոթյակիցը տասնյակ հոդվածների շարք է տպագրել թերթի բազմաթիվ համարներում՝ հաղորդելով, թե ապստամբները կարմիր դրոշ են բարձրացրել իրենց շենքի վրա և պահանջում են սահմանադրական կարգեր («Մշակ», 1908, N 146): Երեք համար անց թերթը տպագրում է երիտթուրքերի կուսակցության պարագլուխ Ահմեդ Ռիզայի մի հայտարարությունը, ըստ որի, խռովությունները թուրք զորքերի մեջ զանգվածային են դարձել, և նրանց մեջ շատ է սահմանադրության կողմնակիցների և Համիդին գահընկեց անել ցանկացողների թիվը: Թերթը հաղորդում է, որ երիտթուրքերը հույս ունեն շատ շուտով կառավարական բանակից փախած զինվորներից ու սպաներից, ինչպես նաև կամավորներից իրենց համար կազմել հատուկ զորք:

Պարսկաստանում ու Թուրքիայում շարունակվում էր պայքարը, իսկ Ռուսաստանում ստոլիպինյան ռեակցիան էր սկսվել: Հետադիմական քաղաքականություն էր վարում նաև Աբդուլ Համիդը: Թուրք մտավորականներին հալածելուց զատ, նա պատեհ և անպատեհ առիթներով հարձակվում էր Արևմտյան Հայաստանի նահանգների վրա: «Մշակի» գլխավոր աշխատակիցներից Համբարձում Առաքելյանը 1907 թ. N 68-ում գրում է. «Դրությունը Հայաստանում հուսահատական է: Թուրքաց կառավարությունը արտաքսում է հայ ժողովուրդը Մուշի և Բիթլիսի շրջաններից և բաժանում է նրանց հողերը թուրքերին: Հայերը փախչում են Դիարբեքիից և Էրզրումից: Թուրքերը հափշտակում են մատաղահաս աղջիկներին և ամուսնացած կանանց: Թուրքաց կառավարությունը, անգոր զսպելու հեղափոխական

ազիտացիան քրդերի և երիտասարդ թուրքերի մեջ, մտադիր է խեղդել այդ շարժումը հայկական արյան մեջ, բորբոքելով ազգամիջյան խտվություններ»:

Այդ տարիներին թերթի խմբագիր Ալեքսանդր Քալանթարը գրում է, որ արևմտահայը լքում է երկիրը, որովհետև այնտեղ ապրելն արդեն անհնար է, սակայն, ըստ նրա, անհրաժեշտ է դրա առաջն առնել, ապա թե ոչ Հայկական հարցը կդառնա «ավերակների հարց»:

Նույն թվականի N 107-ում «Թուրքիան հեղափոխության նախօրյակին» թղթակցության մեջ հայտնում են, թե Թուրքիայի քաղաքական մթնոլորտն ավելի ու ավելի է թեժանում: Հենվելով գործի, այն էլ բացատրապես «Համիդիե» գորաբանակի վրա, որը կազմված էր գլխավորապես բաշիրոզուկներից ու քրդական վայրենի ցեղերից, «ճաճանչափայլ Բարձր Դուռը» շարունակում էր իր կործանիչ քաղաքականությունը՝ ժողովրդի մեջ բուռն ատելություն հարուցելով: Իսկ դրանից օգտվում էին թուրք հեղափոխականները, որոնք շարունակում էին գրավոր ու բանավոր քարոզչությամբ ժողովուրդներին գրգռել թուրքական բռնակալի դեմ: Նրանք կոչ էին անում միանալ և սուլթանից պահանջել, որ երկրի կառավարությունը հանձնի ժողովրդի ընտրյալներին: Տպագրված թռուցիկներից մեկում ասեա թե ինչ էին գրում նրանք. «Ձեզ ենք դիմում, թուրք սպաներ, ձեր ձեռքում է իշխանությունը և գործի պատիվը: Չսպեցեք ձեր զինվորներին, երբ նրանց տանում են «ներքին թշնամիների», ձեր եղբայրների դեմ: Ձեր սրբազան պարտքն է օգնել ժողովրդին նրա դժվար կտվի մեջ դեսպոտիզմի դեմ և աջակցել մեր դժբախտ հայրենիքի արագ և շուտափույթ վերանորոգությանը...»:

Հաջորդ համարում արդեն Հ. Առաքելյանը ընթերցողներին տեղեկացնում է, որ Արևմտյան Հայաստանի դատարկվելն աղետ է ամբողջ հայ ժողովրդի համար, իսկ այդ մասին պետք է հոգ տանեն բոլորը: Նա հայտնում է, որ Անդրանիկը և Հնչակյան կուսակցության առաջնորդ Մուրադը համաձայնության են եկել համաժողովրդական մի համաժողովի գումարման համար, որտեղ էլ վճռվելու էին իրենց հետագա անելիքները: «Հայաստանը՝ մոռացված» առաջնորդողում (1907, N 145) թերթն այն միտքն է զարգացնում, որ տասնյակ տարիներ ի վեր Հայկական հարցը շոշափվում է ամենատարբեր ատյաններում, սակայն այժմ էլ, երբ Ռուսաստանը և Անգլիան նոր դաշնագիր են կնքել, նորից կմնա «ձայն բարբառոյ յանապատի»: «Անգլիայի բաղձանքն է այժմ,- շարունակում է թերթը,- որ սուլթանից որոշ արտոնություններ ձեռք բերե: Մյուս կողմից Ռուսաստանն էլ երկյուղ է կրում, որ Աբդուլ Համիդը չընկնի Գերմանիայի գիրկը...»:

Նույն թվականի N 181-ում «Մշակը» հաղորդում է, որ Մուրադը և Մ. Տամատյանը, գտնվելով Կահիրեում, ելույթ են ունեցել մի մեծ բազմության առջև՝ ելնելով Հնչակյան կուսակցության ծրագրից, ըստ որի, Արևմտյան Հայաստանում տառապում են բոլոր խավերը, և չկա դասակարգային խնդիր: Նրանք կոչ են արել անել ամեն ինչ, որ հայկական բոլոր կուսակցությունները

միաբան գործեն և նպաստեն ազգային ազատագրական պայքարին: Նրանք քաջատեղյակ էին երկրի դրությանը, որովհետև կռվել էին Անդրանիկի, Մերոբի, Գևորգի և այլոց հետ: Բայց և հիասթափվում են սահմանադիր-նամկավարական կուսակցությանը պատկանող «Մշակի» գործիչները, երբ տպագրում էին Փարիզից ստացված հեռագիրը (1907, N 186): «Խառն լուրեր» բաժնում թերթը գրում է. «Մեր ստացած տեղեկություններից պարզվում է, որ վերջերս Փարիզում կայացել է հայ և թուրք հեղափոխական խմբակների ժողով, որը կայացրել է (առանց թեթևամիտ երևալու վախն ունենալու) քաղաքական խոշոր հարցերի մասին շատ հեշտ վճիռներ, այսինքն, վճիռներ՝ իրագործելի... թղթի վրա: Ժողովը որոշել է հրաժարեցնել սուլթանին գահից, փոխել ռեժիմը, հաստատել ներկայացուցչական ռեժիմ հեղափոխական միջոցներով, հաստատել մնայուն միջազգային մասնաժողով և այլն, և այլն»:

Բանավիճային պայքարը այդ օրերին սրվել էր նաև «Մշակի» և Դաշնակցության միջև: Թերթը մի թղթակցություն է տպագրել Էրզրումից (1908, N 14), որտեղ այն միտքն էր արտահայտվում, թե թուրքերը դեռ չեն կարող ստեղծել սահմանադրական կառավարություն, որովհետև դեռևս չունեն պատրաստված, լուսավորված անձեր: «Վտակ» թերթը, որը Դաշնակցության գաղափարներն էր պաշտպանում, անմիջապես հակահարված տվեց «Մշակին»՝ գրելով, թե ռամկավարները կողմ են Աբդուլ Համիդի քաղաքականությանը: Որ «Մշակը» չէր հավատում երիտթուրքերի քաղաքականությանը, փաստ է, բայց նաև այս իմաստով քննադատում էր ՀՅ դաշնակցությանը, իսկ դա վերջինս ընդունում էր սվիններով: Օրինակ, «Մշակը» 1908-ի N 16-ի «Մատենագրություն» բաժնում գրում է Բախշի Բշխանյանի՝ «Թուրքիայի ապագան» քննական էսյուդի մասին, որտեղ հեղինակը Թուրքիայի զարգացումը առնչում է Ռուսաստանից կապերը խզելու և եվրոպական երկրների հետ լայն հարաբերություններ հաստատելու հետ: Էսյուդի հեղինակը Հայկական հարցն էլ լուծում է Ռուսաստանից անջատվելու և պասիվ պայքարի միջոցով: Ըստ Բշխանյանի, պետք է առաջադիմել, բայց զենք չօգտագործել, իսկ Հայկական դատը լուծելու են սոցիալ-դեմոկրատները և միայն տեղացի՝ արևմտահայաստանցի գործիչները... Հետաքրքրական է «Մշակի» N 44-ում տպագրված՝ Մապահ-Գյուլյանի «Թուրք բռնապետությունը և երիտթուրքերը» հոդվածը, ուր հեղինակն այն կարծիքն է հայտնում, թե որոշումները, որ երիտթուրքերն ու մեր դաշնակցականները կայացրել են Փարիզում, վնասակար են հայ ժողովրդի համար: Մասնավորապես, ըստ հոդվածագրի, այդ որոշումներով ոչնչացվում է Հայկական դատը, չնայած այն այդքան մեծ զոհեր է տարել հայ ազգից:

Եվ մինչ մեր ազգային կուսակցությունները մեղքեր էին բարդում միմյանց վրա, Համիդը, վախեցած նաև թուրք հեղափոխականների գործունեությունից, շարունակում էր ջարդերը Հայաստանում: Ահա թե ինչ է գրում այս մասին «Վեստնիկ պոնդեղնիկա» թերթի թղթակից Ալեքսանդր Գարոնը (հոդվածն արտատպել է «Մշակն» իր 1908 թ. N 75-ում). «Ծաղկազարդ Հայաստանի

դաշտերը նորից են ոռոգվում հայի արյունով... Դահիճների դերն այս անգամ ստանձնել են ոչ թե համիդիեների խմբերը, այլ, ինչպես հեռագիրն է գուժում, սուլթանից ներումն ստացած ավագակները, նրանք ևս պետք է հսկեն հայ հեղափոխականներին»: Ժամանակն է կանգնեցնել անմեղ արյան հեղեղը,- եզրակացնում է Ա. Գարոնը և հողվածը վերջացնում Ռ. Պատկանյանի «Բողոք առ Եվրոպան» բանաստեղծության «Միտ բեր Եվրոպան» կտորով:

«Մշակի» խմբագիրը չի հավատում հեռագրական գործակալությունների նոր հաղորդագրություններին, որոնց համաձայն, արյունարբու սուլթանն էլ է երկրում հռչակել սահմանադրական կարգեր: «Մենք,- ասում է առաջնորդողի հեղինակը,- այնքան շատ ենք խաբված եղել Թուրքիայի կողմից, որ չենք հավատում մեր կարդացած հեռագրերին, բայց հուսանք, որ բազմամյա տառապանքներից հետո լույսի մի նշույլ է թափանցում դեպի նահատակների երկիրը» (1908, N 151):

Եվ կարծես մեր օրերի համար է գրված թերթի N 154-ի՝ «Ստիպված զիջումներ» առաջնորդողը, որ հորդորում է վաղօրոք չուրախանալ, որովհետև ոչ մեկը հույս չի փայփայում թուրքական սահմանադրության կենսագործման համար. «Արդարև, ի նչը կարող է իբրև երաշխավորություն ծառայել սահմանադրության ամրության և հարատևության համար:

Միայն մի բան՝ օսմանյան ժողովրդի քաղաքացիական հասունությունը, նրա անհողորդ կամքը՝ ապրելու ազատ սահմանադրական կյանքով: Մակայն այդ հասունությունը դեռ գոյություն չունի այնպիսի ներքին ուժով, որ կարող լինի որոշել իրերի դրությունը իր տրամադրությունների համաձայն, և այդ կամքը դեռ այնքան կուռ և ուժեղ չի, որ հրամայաբար թելադրի իր պատվերները:

Իսկ դրանից դուրս ի նչ երաշխավորություններ կան:

Ոչինչ:

Չորքի վրա դրված հույսերը խախուտ հույսեր են: Չորքը միայն գործիք կարող է լինել դեկավարների ձեռքին: Եվ եթե նա մի քանի տեղ երիտթուրքերի ազդեցության տակ կլինի, շատ ուրիշ տեղերում կլինի հին ռեժիմի մարդկանց տրամադրության տակ: Եվ դժվար է ասել, թե Թուրքիայի պայմաններում ու օսմանյան դժոխքում սրնված-մեծացած Չորքը կարող է լուսավոր, քաղաքակրթական նպատակների և հոսանքների ջատագով հանդիսանալ երկարատև մաքառման մեջ: Ոչ, նա ավելի շուտ կթեքվի իր նախկին հրամայողների կողմը և այնուհետև կդառնա մի սոսկալի կործանիչ ուժ:

- Իսկ Եվրոպա՞ն,- հարցնում է Քալանթարը,- մի թե նա ստոն հանդիսատես կլինի:

Անտարակույս: Նա չի խառնվի ներքին քաղաքացիական գործերի մեջ: Եվ միայն հարց կհարուցի իր վտանգված շահերի պաշտպանության մասին»:

Հիրավի, հանճարեղ կանխագուշակություն: Այդ խառնաշփոթ ժամանակաշրջանում միմյանց սատարելու փոխարեն Գահիրեից ստացվում է Արփիար Արփիարյանի սպանության լուրը: Հ. Սպենդիարյանը «Այլասերված սերունդ» հոդվածում (1908, N 76) մեջբերում է հայերի

բարեկամ էմիլ Դիլոնի այն խոսքերը, որ նա 1907-ին Թիֆլիսում ասել էր հողվածի հեղինակին. «Դուք գիտեք իմ բարյացակամ վերաբերմունքը դեպի հայ ազգը, բայց քաղաքակիրթ աշխարհի հասարակական կարծիքը չի մարսում մարդասպանության ոճիրը, այն, ինչ գաղափարական հողի վրա է, և եթե կրկնվեն այդպիսի ոճիրները, գիտցե՛ք, որ վնասվելու են հայը և նրա հայրենիքի քաղաքական շահերը: Բավ է նկատել, որ հեղափոխության և «Հայաստանի ազատության» դրոշի տակ այսօր ապաստան են գտել և՛ տգետը, և՛ քաղաքանապետ տհաս մանուկը, և՛ դրամաշորթը, և՛ մարդասպանը, և՛ հացկատակը: Եվ այդ կազմալուծման մթնոլորտի մեջ արյունաքամ եղած ժողովրդի թշվառության հարազատի ձեռքով պատրաստվում է օրհասական վախճան»: Խոսքը վերաբերում էր հայ քաղաքական կուսակցությունների տարաձայնություններին, որոնց անդրադարձել էին նաև Անդրանիկը և Միհրան Տամատյանը:

1908-ի N 153-ի «Ստքեր և փաստեր» բաժնում Համբ. Առաքելյանը ևս գրում է Թուրքիայի սահմանադրության մասին, որ ընդունել է սուլթանը, և քննադատում է «Զանգակ» դաշնակցական թերթի աշխատակիցներին, որոնք հայտարարում էին, թե նաև իրենք են սուլթանին ստիպել անելու այդ քայլը: Առաքելյանը զգուշավորության է կոչում նրանց՝ պետք է զգույշ գործել, որ գոնե սահմանադրության այդ փոքրիկ լույսը հայերի վրա էլ ընկնելու փոխարեն մի նոր ողբերգության չտանի նրանց: Ինչպես Գր. Արծրունին, այնպես էլ Համբ. Առաքելյանը համոզված էր, որ երիտթուրքերի ծրագիրը բացասում է առանձին ազգություններին կամ ժողովուրդներին որևէ ինքնավարություն տալու գաղափարը: Նրանց ծրագիրը պահանջում է ընդհանուր բարեփոխումներ անել ամբողջ օսմանյան կայսրության համար, ճանաչում է միայն օսմանյան քաղաքացի և ոչ թե թուրք, քուրդ, հայ, հույն... Այսինքն, լինելու է օսմանյան մի ընդհանուր պետություն փառիշտահի գայիտնի ներքո, իսկ տիրապետող կրոնը պիտի լինի իսլամը:

Արդյոք այդպիսի հանգամանքներում ջուրը չէ՞ին ընկնում թե՛ Բեռլինի, թե՛ Կրետեի դաշնագրերով և թե՛ մայիսյան ծրագրով հայերին խոստացված բարեփոխումները, հայերի ձեռք բերած միջազգային իրավունքները:

1908-ի N 162-ում «Մշակի»՝ Լոնդոնի թղթակից Մինաս Յուլկը խմբագրություն է ուղարկում «Դեյլի Նյուզի» մի հողվածը, որ անգլիական թերթը սույազրել է Ահմեդ Ռիզայի հարցազրույցից, որը Լոնդոնում էր գտնվում խաղաղության միջազգային կոնգրեսին մասնակցելու համար: Ապա Մ. Յուլկը գրում է, թե «Մեշվերթ» թերթի խմբագրին ինքը չի հավատում, քանի որ նա շատ կծու արտահայտություններ է արել հայ հեղափոխականների և նահատակների հասցեին: Եվ զարմանում է, թե ինչու է «Մշակի» նախկին գլխավոր աշխատակից, իսկ այդ օրերին ՀՅԴ-ի պարագլուխներից մեկը՝ Մալումյան-Ակնունին հավատում Ռիզայի սին խոսքերին:

1908-ի N 229-ը հաղորդում է, թե թուրքահայ գավառներից սահմոկեցուցիչ տեղեկություններ են ստացվում թալանի, սպանությունների, քաղաքների և գյուղերի վրա կատարված զանգաձային-

ավագակային հարձակումների մասին: Հայկական ջարդը Վերան քաղաքում հրեշավոր էր: Մոլեռանդ ամբոխը, որը քաղաքի միայն 2-ն էր կազմում, կատարել է իր ստոր գործը՝ կոտորելով թե՛ տղամարդկանց, թե՛ կանանց, թե՛ երեխաներին ու ծերերին: Կողոպտվեց բնակչության 3/4-ը կազմող հայության ամբողջ հարստությունը, կանայք (անգամ աղջնակներ) գոհ գնացին ամենաքստամների բռնաբարության ու սպանության: Նույնիսկ թուրքական մամուլն է գրում, թե պետք է եռանդուն միջոցներ ձեռնարկել, իսկ եթե ոչ, ապա Եվրոպան կդադարի հավատալ իրենց. «Մի թե կարելի է վերանորոգել մի երկիր, երբ գործը գործում է կողոպտիչների հետ միասին, և ոստիկանությունն անընդունակ է նույնիսկ ամենատարրական կարգը պահպանելու, իսկ տգետ ամբոխը առաջնորդվում է գազանային բնազդներով: Ահա և քեզ սահմանադրություն»:

Այնուամենայնիվ, սահմանադրության ընդունումից հետո Պոլիս էին վերադառնում նախկինում քստրված երիտթուրքերի պարագլուխները, բանտերից ազատվում էին Նիկոլ Դումանը, Գերասիմը, Մելքոնը, Խաչիկը, միմյանց հաշտության ձեռք էին մեկնում դաշնակցականներն ու հնչակյանները: Սրանց խանդավառությունը երիտթուրքերի՝ իշխանության անցնելու կապակցությամբ աննկարագրելի էր, իսկ հույսը միակն էր՝ հայ ժողովուրդը Թուրքիայում իբր արդեն ապահով կյանք էր վարելու: Սակայն ուրբաթը շաբաթից շուտ եկավ. ընդամենը ամիսներ անց հենց երիտթուրքերի գիտությամբ կատարվեց Ադանայի կոտորածը, որին գոհ գնացին 30 հազարից ավելի հայեր, իսկ առիթը վարպետորեն ստեղծել էին թուրքերը՝ մի թուրքի դիակ գցելով հայի այգին և հայտարարելով, թե հայերն են սպանել իրենց ազգակցին: Եվ նույնիսկ ռուսական «Ռուսսկոյե Սլովո» լրագիրն է այս կապակցությամբ զարմանքով գրում, թե դաշնակցականներն ու հնչակյաններն արել են ամեն ինչ, որ հաղթեն երիտթուրքերը, իսկ այժմ, Ադանայի կոտորածի ժամանակ, երբ այդ երկու կուսակցությունները ստիպված էին զենքով պաշտպանել իրենց երեխաներին ու կանանց պատիվը, երիտթուրքերը չեն ընդունում դա, որովհետև, ըստ նրանց, ոչ մի հայ իրավունք չունի թուրքի դեմ կոպելու: Հետաքրքրական է «Ռուսսկոյե սլո- վո»-ի թղթակցի հարցազրույցը Մալումյան-Ակնունու հետ, որտեղ վերջինս հայտարարում է, թե իրենց կուսակցությունը առնչություն չունի այն տարածված լուրերի հետ, թե հայերը ցանկանում են անկարգություններ հրահրել Պոլսում: Սակայն, ըստ Ակնունու, երիտթուրքերը կարող էին կանխել Ադանայի կոտորածը, եթե ցանկանային: Իսկ երիտթուրքերի պարագլուխները Ադանայի կոտորածը նաև որակում են որպես հայերի ապստամբական պլանները ձախողելու միջոց կամ այդ կոտորածի ամբողջ պատասխանատվությունը դնում էին Արդուլ Համիդի ու նրա կողմնակիցների վրա:

«Մշակում» զգալի մաս են կազմում այն նյութերը, որտեղ պարզորոշ ուրվագծվում է քրդերին հայերի դեմ հրահրելու նաև երիտթուրքական քաղաքականությունը, ինչպես դա վարպետորեն անում էր կարմիր սուլթանը: Երիտթուրքերը հետևողական էին ջարդարարության մեջ: Եվ

թուրք ու այլազգի այն պատմաբանների կարծիքը, թե հայերն էին մեղավոր կոտորածների հարցում, քանզի լինելով թուրքահպատակ՝ երկրպագում էին ռուսներին, հիմնովին սուտ է, մանավանդ որ Ադանային հաջորդեցին հայկական բոլոր նահանգների հայության կոտորածները: Դրանք ապացուցում են, թե երիտթուրքերի ծրագրերը նախօրոք պատրաստ էին, և նրանց վերջնական նպատակը հայերի իսպառ բնաջնջումն էր, միայն թե սպասում էին հարմար պահի:

1909-ի N 73-ում թերթի խմբագիր Քալանթարը գրում էր, թե մոլեռանդ խուժանը, դարեր շարունակ արյուն թափելով, դեռ չի կշտացել դժոխային վայելքների հաճույքից և դարձյալ սայթաքում է դեպի այն վիհը, որը բացառել է ազգերի համերաշխության որևէ արտահայտություն: Նույն համարի «Հայկական ահռելի աղետը» հոդվածում Համբ. Առաքելյանը գրում է. «Բովանդակ հայությունը պետք է ընկղմվի խորին սուգի մեջ, ի լուր այն սոսկայի ջարդերի, որոնց ենթակա է այժմ հայ ժողովուրդը՝ խռովություններով, ապստամբությամբ ալեկոծվող, տարուբերվող Թուրքիայում»: Ջարդերը ողջ Թուրքիայում էին կատարվում՝ նախօրոք մտածված ծրագրով: 1909-1914 թթ. արևմտահայերին վերաբերող «Մշակի» լուրերը լեցուն էին վերահաս տագնապով, աղետալի ուրվապատկերներով, և թերթը հակամետ չէր Թուրքիայի և նրա ազգաբնակչության, այդ թվում և հայերի կացության բարենորոգման որևէ լավատեսության. մեր կարծիքով, այն ավելի իրատես էր, քան ազգային առաջատար որևէ կուսակցության հրատարակություն:

1912-ին հայկական վիլայեթներում բարենորոգումներ մտցնելու հարցը նոր հունի մեջ էր մտել: Եվրոպական երկրները և Ռուսաստանը համոզված էին, որ այնտեղ նոր փոփոխություններ պիտի կատարվեն: Նույնիսկ թուրք գործիչներ կային, որոնք համաձայն էին այդ բարենորոգմանը: Ըստ թուրքական առաջադեմ մտածողների, բալկանյան աղետի ամբողջ մեղքը ընկնում էր թուրքական կառավարության վրա, որը շարունակ դեմ էր երկրում իրավական բարեփոխումներ մտցնելուն: Եվ եթե Եվրոպան երես էր դարձրել Թուրքիայից, այդ բանում մեղավորը դարձյալ օսմանյան պետությունն էր, որովհետև Թուրքիան իր սովորական գործելակերպի պատճառով արժանացել էր միայն Եվրոպայի հակակրանքին, մինչդեռ իր ախոյանները այդ նույն Եվրոպայի համակրանքն էին վայելում (100 տարուց հետո էլ պատմությունը կրկնվում է):

Անդրադառնալով Պոլսի վիճակին՝ Քալանթարը գրում է, թե ճգնաժամն այստեղ այնպիսին է, որ Թուրքիայի գործերին օտար տերությունների միջամտությունը անհրաժեշտություն է դառնում: «Հայկական հարց» վերտառությամբ թերթն անընդհատ լուրեր է տպագրում Էրզրումից, Մուշից, Վանից, Թոքատից՝ գրելով, թե գորքերն անխնա ճնշում են յուրաքանչյուր զանգվածային ելույթ, թե մուսուլմանական տարրը բոլոր վայրերում դառնում է անսանձահարելի: «Մշակն» այս օրերին արտաստպում է Անրի Ռոշֆորի՝ «Լա Փարթի» լրագրի «Մեծ զոհը» վերնագրով հոդվածը, որտեղ հեղինակը այն համոզմունքն է հայտնում, որ եթե մի ժամանակ հույս կար, թե Համիդին

փոխարինած կառավարությունը կտար կանանց, տղամարդկանց, ջահել աղջիկների կյանքը հարգող մի հրահանգ, ապա քաղաքակիրթ աշխարհին այժմ միանգամայն հիասթափված է: Թուրքիայի նոր կառավարությունը, ըստ Ռոշֆորի, իրախուսեց միայն այն գաղափարները, որոնք Համիդի մտահղացումներից վատթար են: Եվ նա հետաքրքիր լուծում է առաջարկում. Բուլղարիան, Սերբիան, Հունաստանը, որոնք այս օրերին պատերազմի դաշտում հաջողությունների են հասել, չպետք է սպասեն Եվրոպայի քայլերին, հենց իրենք պիտի սրբեն իրենց քրիստոնյա եղբայրների արտասուքը և հայերին ազատեն օսմանյան լծից:

Ակներն էր, որ «Մշակը» պաշտպանում էր ազատագրական շարժման խոհեմ, չափավոր գործելակերպի՝ սեփական պատկերացումները՝ թուրքերին չգրգռելու և դրանով իսկ արևմտահայությանը ֆիզիկական բնաջնջումից փրկելու նպատակով: Համբ. Առաքելյանը հենց այս հարցին է անդրադառնում: Ըստ նրա, թուրքերը ամբողջ Եվրոպայում աղաղակում էին, թե սերբերը, բուլղարները, հայերը գազանաբար են վարվում իրենց հետ: Հարկ է նշել, սակայն, որ Առաքելյանը թուրք-եվրո-ռուսական հարաբերությունների հարցում արտահայտում էր բավական միամիտ մտքեր՝ մարդասիրական կամ բարոյական որոշակի հատկանիշներ վերագրելով մեծ տերությունների արևելյան քաղաքականությանը: Եվրոպայի կարծեցյալ դիմաշրջումը Թուրքիայից ոչ այլ ինչ էր, եթե ոչ այդ երկրների միջև եղած հակասությունների արդյունք:

Ռուս լրագրող Օլգենինը, Թիֆլիս վերադառնալով հայկական վեց վիլայեթներում շրջագայելուց հետո, հավաստում է, թե վայրենի տարրերն իրենց անսանձ են պահում և պատրաստ են ամեն տեսակ անակնկալներ անել քրիստոնյաներին: Ռուս լրագրողի խոսքերն է հաստատում «Էրոշակից» քաղված լուրը, ըստ որի, քրդական շարժումները ահավոր չափեր են ընդունել Մղերդի և Բիթլիսի շրջաններում: Թերթը տպագրում է նաև Հաճնի թղթակցի լուրը. «Կիլիկոյ ամեն կողմերը մահահոտ տարաձայնություններ շրջան կրնեն: Ամբողջ նահանգը էլեկտրականացված է: Ամեն կողմն էրվիշի կամ մուլլայի տարազին տակ թուրք պրոպագանդիստներ ազգային կույր մոլեռանդություն կգրգռեն» («Մշակ», 1913, N 34): «Հայկական ինքնապաշտպանության գործը Թուրքահայաստանում», (1913, N 116) հողվածում Քուրմ թղթակիցը ավստասնք է հայտնում, թե հայերը դեռևս չեն ուզում հասկանալ իրերի ճշմարիտ դրությունը. «Հայը չի հասկանում, որ առանց զենքի, ինքնապաշտպանական միջոցների անհնար է ընդդիմանալ թուրք և քուրդ ելուզակներին»: Նա ծաղրում է հայերի այն մտայնությունը, թե իրենք աղքատ են, զենք գնելու հնարավորությունից զուրկ. «Մովորել ենք միշտ լալ, տրտնջալ, աղքատ, անկարող ձևանալ: Պետք է պատռել կեղծիքը, պետք է բաց-աշկարա ասես, որ եթե ուզում ես ապրել, պիտի զինվես»:

1914-ն էլ սկսվում է չարագուշակ լուրերի տպագրությամբ: Արդեն առաջին համարներում «Մշակը» «Նովոյե վրեմյա» թերթի Պոլսի թղթակցի հաղորդմանն էր անդրադառնում, թե կոտորածներ են

նախապատրաստվում հայերի դեմ, սակայն Ինուսաստանի՝ օսմանյան կայսրության դեսպանը ժխտում է այդ լուրը: Իսկ թերթի աշխատակից Ա. Մուրադյանի «Պետք է պատրաստ լինել» հոդվածը (1913, N 208) ապացուցում է հակառակը: Նա համոզված է, որ հայր Թուրքիայում պիտի պատրաստ լինի ամեն տեսակի անակնկալի: Վառողի հոտ է գալիս, քանի որ Թուրքիան Կովկասի սահմաններում հսկայական զորք է կուտակում: Ըստ Մուրադյանի, քանի դեռ թնդանոթները «չեն խոսել», Արևմտյան Հայաստանում մեծածավալ անկարգություններ չեն կատարվի, բայց եթե քաղաքական հանգամանքները բարդանան ու պատերազմ լինի, Թուրքիայի կապանքները կքանդվեն, մանավանդ որ այդ պատերազմը դառնալու է Թուրքիայի բաժանման պատճառ: Նա գրում է. «Երբ օսմանյան պետություն կոչվող պառավ ու փտած կաղնու տապալումն անխուսափելի դառնա, հայ ժողովուրդը չպետք է մոռանա, որ անկման դեպքում ինքն էլ նրա ծանրության տակ ճղակոտոր լինելու նվազագույն վտանգի տակ պետք է գտնվի: Իսկ նվազագույն վտանգով կարող է ազատվել այն դեպքում միայն, եթե վաղօրոք պատրաստված լինի դրան և ձեռք առած լինի ինքնապաշտպանության բոլոր հնարավոր միջոցները»:

Այնինչ ինքնապաշտպանության միջոցների փոխարեն ընթանում էր անմիտ պայքար, խռովություն, զժտություն և որպես դրա հետևանք՝ անգորություն:

Թուրքիան մտավ պատերազմի մեջ: Հայ մտավորականության ներկայացուցիչները ձերբակալվեցին: Ձերբակալվեցին և մահապատժի ենթարկվեցին նաև Դաշնակցության ներկայացուցիչները Մալումյան-Ակնունու հետ միասին, որը զարմանք էր հայտնել, թե ապրիլի 23-ի երեկոյան ինքը խնջույքի սեղան էր նստած Էնվերի և Թալեաթի հետ, իսկ նրանք տեղյակ են այս ձերբակալությանը: Թուրքիան եվրոպական մեծ տերությունների թողտվությամբ բնաջնջեց մի ողջ ժողովուրդ, իսկ մեր արևելահայ մտավորականներն ու կաթողիկոսը անպատասխան խնդրագրեր էին ուղարկում եվրոպական տարբեր աստիճաններ:

КРИТИКА МЛАДОТУРОК НА СТРАНИЦАХ ГАЗЕТЫ “МШАК”

АЛОЯН Л. А.

Резюме

На протяжении нескольких десятилетий Армянский вопрос и бесправное положение армянского населения Западной Армении находились в эпицентре внимания публицистов газеты “Мшак”. “Мшаковцы” полагали, что младотурки отвергают идею автономии подданных османской империи и что их политические программы направлены на отуречивание подданных нацменьшинств.

Аданская резня 1909 года и ужесточение гонений в отношении армянского населения Западной Армении нашли отражение на страницах

газеты “Мшак”, которая подверла острой критике идеологию и программу младотурок. Одновременно газета выступала в защиту национально-освободительного движения, придавая важное значение идее вооруженной самообороны.

THE CRITICISM OF YOUNG TURKS IN “MSHAK” NEWSPAPER

L. Aloyan

Abstract

Over several decades, the Armenian question and the powerless state of the Armenian population in Western Armenia was in the limelight of “Mshak” newspaper. The newspaper believed the Young Turks to deny the idea of autonomy of the subjects of the Ottoman Empire and their political programs to be targeted at Turkification of the national minorities.

“Mshak” covered Adana massacres of 1909 and prosecutions against the Armenian population in Western Armenia as well as criticized the ideology and program of the Young Turks. At the same time, the newspaper advocated the Armenian national-liberation movement highlighting the relevance of military self-defence.